

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի <<Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի բնագիտություն(12դասաժամ),ֆիզիկա(5դասաժամ), ֆիզկուլտուրա(20դասաժամ), տեխնոլոգիա(8 դասաժամ) , դասվար(15դասաժամ), զինղեկի, ՆԶՊ(10 դասաժամ) թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստացված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1)
2. Փաստաթուղթ /դիպլոմ/ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ:
3. Անձնագրի պատճենը:
4. Ինքնակենսագրություն (Ձև 4):
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի ներկայացուցիչները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են 2021թվականի հոկտեմբերի 13-ից մինչև հոկտեմբերի 26-ը ներառյալ, ամեն օր ժամը 10.00-15.00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2021թ. հոկտեմբերի 28-ին ժամը 14.00-ին ,ՀՀ Սյունիքի Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ք.Քաջարան Խանջյան 7:

Տեղեկությունների համար զանգահարել/0285/ 3-21-09 հեռախոսահամարով: